ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

<<25>> հունիսի 2025 թ. քաղաք Մարալիկ

2025 թվականի հունիսի 25-ին, ժամը 15:30-ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի ավագանու նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու հերթական նիստը:

Նիստը վարում էր՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար, ավագանու անդամ՝ Արման Սարիբեկյանը:

Նիստն արձանագրում էր՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հարություն Համբարյանը:

Զեկուցողը նշեց, որ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն 2025 թվականի ավագանու հերթական առաջին նստաշրջանը սկսվել է փետրվարի երկրորդ երեքշաբթի օրվանից և ավարտվում է հունիսի վերջին չորեքշաբթի, այսինքն այսօր:

Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 18-ի N 7-Ա որոշման և համայնքի ավագանու կանոնակարգի համաձայն, Անի համայնքի ավագանու նստաշրջանների գումարման համայնքի ավագանու հերթական նիստերի անցկացման օր է սահմանված յուրաքանչյուր ամսի վերջին հինգշաբթին, նշված օրենքի համաձայն ավագանու հերթական նիստը հրավիրվել է այսօր:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի համաձայն, ավագանու հերթական նիստից մեկ շաբաթ առաջ հրապարակվել է ավագանու այսօրվա նիստի օրակարգը, նշվել է նիստի անցկացման վայրը և ժամանակը: Այդ տեղեկությունները փակցվել են համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում, տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով, տեղադրվել են մարզպետարանի, համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքերում և հրապարակային ծանուցումների www.Azdarar.am կայքում:

Նիստի օրակարգում ընդգրկված որոշումների նախագծերը մեկ շաբաթ առաջ տրամադրվել են ավագանու անդամներին և տեղադրվել համայնքի պաշտոնական կայքում:

Ավագանու նիստին ներկա անդամների հաշվառման արդյունքում արձանագրվեց, որ Անի

համայնքի ավագանու 21 անդամներից, համայնքի ավագանու հերթական նիստին մասնակցում են <<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցության ավագանու 10 անդամները՝

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ

Ռ. ԱՐՇԱԿՅԱՆԸ

Է. ՈՒՌՈՒՏՅԱՆԸ

Հ. ԶԱՏԻԿՅԱՆԸ

Ժ. ԱԼԵՔՅԱՆԸ

Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆԸ

Ն. ՍԱՐՈՅԱՆԸ

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆԸ:

<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ավագանու անդամ՝

ԳԱԳԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԸ

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու անդամ՝

ՄՈՒՐԱԴ ԱՍԼԱՆՅԱՆԸ:

Հարգելի պատճառով ավագանու նիստից բացակայում են <<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցության ավագանու անդամ Մերի Ենոքյքնը /հետծննդյան արձակուրդ/ Արտակ Շաբոյանը և <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ավագանու անդամ Գագիկ Պողոսյանը :

Անհարգելի կարգով բացակայում են՝

Վ. ԿՆՅԱԶՅԱՆԸ

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆԸ:

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու անդամ՝

Ն. ԱՍԱՏՐՅԱՆԸ

<<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու անդամ՝

Ա. ԲՈՋԻԿՅԱՆԸ

Դրանով հանդերձ, համայնքի ավագանու նիստի քվորումը ապահովված է /ավագանու

ներկա անդամներ՝ 11, բացակա՝ 10/ համայնքի ավագանու հերթական նիստը հայտարարվեց բացված:

Համայնքի ավագանու նիստին ներկա են համայնքի ղեկավարի տեղակալները, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը, համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ, համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքային ենթակայության կազմակերպությունների տնօրեններ:

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՆՈՐ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/

4) <<ԴԵՊԻ ՀԱՅՔ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԱԼԻԿԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՄԵԿ ՄԻՋԱՆՑՔԻ ԵՎ ԵՐԵՔ ԴԱՍԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքապետարանի Կրթության, մշակույթի,սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Գոհար Ծերունյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔՈՒՄ 30.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԵՆՅԱԿԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԺԱՄԿԵՏՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԵՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-013-0112-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 3.53453 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԾԻՐԱՆԱՏՈՒՖ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 23-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

10) <<ՔԱՐԱԲԵՐԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԱՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ Հ. ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ՇԻՆԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՉՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ

ԱՊԱՄՈՆՏԱԺՎԱԾ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

/Զեկուցող՝ Անի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հարություն Համբարյան/

Հարգելի գործընկերներ

Եթե օրակարգի վերաբերյալ առաջարկություններ կամ դիտողություններ կան խնդրում եմ նորկայացնել:

Առաջարկությամբ հանդես եկավա <<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցության ավագանու անդամ Հասմիկ Զատիկյանը:

Առաջակություն ներկայացվեց, որպես հրատապ խնդիր, օրակարգում ընդգրկել հետևյալ հարցը՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՇԵՆՔՈՒԻ ԵՐԿՈՒ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԵՐԵՔ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցողը նշեց, որ հարցի կարևորությունը կայանում է նրանում, որ <<Գյումրու երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն>> հասարակական կազմակերպությանը նախաձեռնել է <<Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման>> ծրագրի շրջանակներում Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրում հիմնել <<Երիտասարդական տարածք>>, որը նպատակաուղղված է համայնքի 13-35 տարեկան երիտասարդների կարողությունների զարգացման, ռեսուրսների, ծառայությունների, տարբեր հնարավորությունների հասանելիությանը, որտեղ երիտասարդները կկարողանան գտնել ոգոշնչում՝ ստեղծագործելու, գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու, շփվելու, խաղալու և զվարճանալու հնարավորություններ:

Ծրագրով նախատեսված աշխատանքները կազմակերպելու համար կազմակերպությանը անհրաժեշտ է երկու աշխատասենյակ, որոնք կլինեն բարեկարգված և համապատասխան գույքով հագեցված: Նախատտեսված ժամկետում ծրագիրը մեկնարկելու համար առաջարկում եմ նշված հարցը ընդգրկել օրակարգի նախագծում, որով նախատեսվում է Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Սառնաղբյուր բնակավայրի մշակույթի տան շենքի /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Սառնաղբյուր բնակավայր, 1-ին փողոց 51 շենք / երկրորդ հարկի 35.0 քառակուսի մետր ներքին մակերեսով երկու աշխատասենյակները 2025 թվականի հուլիսի 1-ից 3 /երեք/ տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել կազմակերպությանը:

Քննարկման արդյունքում կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 քվեարկության արդյունքում ներկայացված առաջարկությունն ընդունվեց և հաստատվեց համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը:

Օրակարգ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի դրույթով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի առաջին նստաշրջանի 2025 թվականի հունիսի 25-ին ժամը 15:30-ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՆՈՐ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/

4) <<ԴԵՊԻ ՀԱՅՔ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԱԼԻԿԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՄԵԿ ՄԻՋԱՆՑՔԻ ԵՎ ԵՐԵՔ ԴԱՍԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքապետարանի Կրթության, մշակույթի,սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Գոհար Ծերունյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔՈՒՄ 30.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԵՆՅԱԿԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԺԱՄԿԵՏՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԵՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-013-0112-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 3.53453 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԾԻՐԱՆԱՏՈՒՖ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 23-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

10) <<ՔԱՐԱԲԵՐԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԱՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ Հ. ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ՇԻՆԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՉՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ԱՊԱՄՈՆՏԱԺՎԱԾ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգ-2

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՆՈՐ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան

Զեկուցողը նշեց, որ Վարդան Ուռումյանի և ընկերների համատեղ բարեգործական համերգից ստացված հասույթից Անի համայնքի «Մարալիկի քաղաքային գրադարան» համայնքային բյուջետային հիմնարկին է նվիրաբերվել 156 կտոր գրականություն՝ 713 200 ՀՀ դրամ արժողության, իսկ համայնքի բյուջեի միջոցներով Անի համայնքի <<Անիի կոմունալ տնտեսություն>> բյուջետային հիմնարկի կարիքների համար ձեռք է բերվել գրասենայակայի և այլ գույք:

Որոշման նախագծով նախատեսվում է հաստատել՝ բարեգործական հիմունքներով և համայնքի բյուջեի միջոցներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի կողմից սեփականության իրավունքով ձեռք բերված նոր գույքի մասով համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները: Նշվեց, որ գույքի ցանկը հավելվածի տեսքով ներկայացված է ներկայացված է :

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Անիի համայնքապետարանի կողմից սեփականության իրավունքով ձեռք բերված նոր գույքի մասով համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՆՈՐ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Անիի համայնքապետարանի կողմից սեփականության իրավունքով ձեռք բերված նոր գույքի մասով համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի կողմից սեփականության իրավունքով ձեռք բերված նոր գույքի մասով համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի
N 79-Ա ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի «Մարալիկի քաղաքային գրադարան» համայնքային բյուջետային հիմնարկ

Հ/հ	Գույքի անվանումը	Ձեռքբերման տարեթիվ	Չափի միավոր	Միավորի արժեք /ՀՀ դրամ/	Փաստացի		Հաշվապահական հաշվառմամբ		Ձեռքբերման աղբյուրը
					Քանակ	Գումար /ՀՀ դրամ/	Քանակ	Գումար /ՀՀ դրամ/	
1.	Գրականություն	2025			141	433200	141	433200	Բարեգործական (Վարդան Ուռումյանի և ընկերների համատեղ բարեգործական համերգից
2.	Բազկաթոռ համակարգչի	2025	հատ	60000	2	120000	2	120000	
3.	Աթոռ համակարգչի	2025	հատ	25000	1	25000	1	25000	

4.	Աթոռ աշխատանքային	2025	հատ	11250	12	135000	12	135000	ստացված հասույթից)
	ԸՆԴԱՄԵՆԸ					**713200**		**713200**	

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի <<Անի կոմունալ տնտեսություն>> համայնաքային բյուջետային հիմնարկ

0	*Գույքի անվանումը*	*ՉԱՓԻ ՄԻԱՎՈՐ*	*ՄԻԱՎՈՐԻ ԱՐԺԵՔԸ*	*ՔԱՆԱԿ*	*ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ*
1	Պրոցեսոր INTEL CORE I5-12400/TRAY	հատ	57980	1	57980
2	Հովացուցիչ պրոցեսորի xilence xc232	հատ	4500	1	4500
3	Մայրական սալիկ PRIME H610M-K D4 ASUS	հատ	36000	1	36000
4	Օպերատիվ հիշվող սարք KINGSTON KVR32N22S6/8 8GB	հատ	8500	1	8500
5	Կոշտ սկավառակ KINGSTON sa 400S37/480G 480GB	հատ	16000	1	16000
6	Համակրգչային իրան սնուցման բլոկով predator B52	հատ	13500	1	13500
7	Ստեղնաշար GENIUS Smart BG101 BL ACK USB RU	հատ	4500	1	4500
8	Մկնիկ GENIUS DX-120 USB BLOCK	հատ	2000	1	2000
9	ՄոնիտորPilips 241 V8L6 23.8	հատ	42000	1	42000
10	Տեսաքարտ ARKTEK AKN210 d3s1gl 11gb	հատ	15000	1	15000
11	Դյուրակիր համակարգիչ DLL Vostor 3 520 I3-1215u	հատ	154983	2	309966
12	Տնօրենի աշխատասենյակի			1	186000

	հավաքածու/սեղան, դիմադիր, կողադիր, պահարան/	հատ	186000		
13	Պահեստի պահարան / 20 քմ/	գմ	4500	20	90000
14	Գրասենյակային սեղաններ	հատ	27000	7	189000
15	Գրասենյակային պահարաններ	հատ	40000	4	160000
16	Փոքր պահարաններ	հատ	25000	2	50000
17	Շերտավարագույր	քմ	5500	30,03	165165
18	Մարտկոցների լիցքավորիչներ	հատ	70000	1	70000
19	Էներգիայի չափման սարքեր	հատ	10000		10000
20	Ճնշակներ / կոմպրեսորներ/	հատ	240000	1	240000
21	Հեղուկացիր սարքեր	հատ	45000	1	45000
22	Գայլիկոն/ գայկավյորտ/	հատ	60000	1	60000
23	Գործիքների հավաքածու	հատ	20000	1	20000
24	Գայլնիկոնի սայրեր/ նասադկա գայկավյորտ/	հատ	15000	1	15000
25	Սդղմիչ աքցաններ	հատ	6000	1	6000
26	Տարատեսակ ձեռքի գործիքներ	հատ	32000	1	32000
27	պտուտակահաններ	հատ	12000	1	12000
28	Հեղուկացիր սարքեր	հատ	320000	1	320000
	ԸՆԴԱՄԵՆԸ		**1472963**		**2180111**

Օրակարգ-3

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի Ն 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

//Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/

Զեկուցողը ներկայացրեց համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու նախագիծը, ներկայացրեցրեց պարզաբանումներ և պատասխանեց ավագանու անդամների հարցերին:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն

ընդունվեց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1--3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 181-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու 2025 թվականի
հունիսի 25-ի թիվ N .-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 181-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Գործառական դասակարգման բաժին 08 խումբ 02, դաս 01 (Քաղաքային գրադարանի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4212 (Էներգետիկ ծառայություններ) հոդվածի «300,0» թիվը փոխարինել «350,0» թվով, 4221 (Ներքին գործուղումներ) հոդվածի «100.0» թիվը փոխարինել «50.0» թվով, 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի «0» թիվը փոխարինել «138,0» թվով, 4269 (Հատուկ նպատակային նյութեր) հոդվածի «220.0» թիվը փոխարինել «582.0» թվով:

2. Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 05, դաս 01 (Արվեստի դպրոցի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4111 (Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի «22500,0» թիվը փոխարինել «22400,0» թվով, 4221(Ներքին գործուղումներ) հոդվածի «100.0» թիվը փոխարինել «0» թվով, 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի«30.0» թիվը փոխարինել «190,0» թվով, 4269 (Հատուկ նպատակային նյութեր) հոդվածի «534,0» թիվը փոխարինել «574,0» թվով,5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածի «0» թիվը փոխարինել «326,4» թվով :

3. Գործառական դասակարգման բաժին 08, խումբ 01, դաս 01 (Հանգիստ և սպորտ) և տնտեսագիտական դասակարգման 4251 (Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի «18243,2» թիվը փոխարինել «17743,2» թվով, 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի «29000,0» թիվը փոխարինել «27673,6» թվով:

4. Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 02, դաս 01 (Գյուղատնտեսություն) և տնտեսագիտական դասակարգման 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի «600.0» թիվը փոխարինել «0» թվով, 4252 (Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի «0» թիվը փոխարինել «850,0» թվով, 4264 (Տրանսպորտային նյութեր) հոդվածի «1600.0» թիվը փոխարինել «3020.0» թվով:

5. Գործառական դասակարգման բաժին 01. խումբ 01, դաս 01 (Ապարատի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4252 (Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի «4000,0» թիվը փոխարինել «4200,0» թվով:

6. Գործառական դասակարգման բաժին 05 խումբ 03, դաս 01 (Սան.մաքրում) և տնտեսագիտական դասակարգման 4264 (Տրանսպորտային նյութեր) հոդվածի «23200,0» թիվը փոխարինել «22200,0» թվով, 5121 (Տրանսպորտային սարքավորումներ) հոդվածի «1000,0» թիվը փոխարինել «2000,0» թվով:

7. Գործառական դասակարգման բաժին 06. խումբ 01, դաս 01 (Բնակարանային շինարարություն) և տնտեսագիտական դասակարգման 4251(Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի «20000.0» թիվը փոխարինել «19130.0» թվով:

Օրակարգ-4

4) <<ԴԵՊԻ ՀԱՅՔ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԱԼԻԿԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՄԵԿ ՄԻՋԱՆՑՔԻ ԵՎ ԵՐԵՔ ԴԱՍԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ <<Դեպի Հայկ>> հիմնադրամի կողմից համաձայնություն է տրվել Մարալիկի արվեստի դպրոցի շենքի մեկ միջանցքի և երեք դասասենյակների վերանորոգման աշխատանքների կատարման ծրագրի իրականացմանը: Համաձայն հիմնադրամի և մեր միջև ստորագրված համաձայնագրի վերանորոգման աշխատանքների համար անհրաժեշտ

քանակի շինարարական նյութերը տրամադրվելու է հիմնադրամի կողմից, իսկ մասնագիտական աշխատանքների վարձատրությունը և աշխատանքներում ներգրավվող մինչև 20 կամավորների մեկանգամյա օրապահիկ սննդի տրամադրման պարտավորությունը ստանձնել է համայնքապետարանը:

Որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի 2025 թվականի բյուջեի Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 06, դաս 01 (Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 4637 (Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածից 1 300 000 (մեկ միլյոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ հատկացնել Անի համայնքի <<Մարալիկի Արվեստի դպրոց>> բյուջետային հիմնարկին՝ <<Դեպի Հայք>> հիմնադրամի կողմից իրականացվող արվեստի դպրոցի մեկ միջանցքի և երեք դասասենյակների վերանորոգման ծրագրով նախատեսված մասնագիտական աշխատանքների վարձատրության /820 000 ՀՀ դրամ/ և ծրագրում ընդգրկված կամավորներին սննդով ապահովելու համար /480 000 ՀՀ դրամ/:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթով և հիմք է ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի և <<Դեպի Հայք>> հիմնադրամի գործադիր տնօրենի միջև 2025 թվականի մայիսի 30-ին ստորագրված համաձայնագիրը.

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց

<<ԴԵՊԻ ՀԱՅՔ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԱԼԻԿԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՄԵԿ ՄԻՋԱՆՑՔԻ ԵՎ ԵՐԵՔ ԴԱՍԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի և <<Դեպի Հայք>> հիմնադրամի գործադիր տնօրենի միջև 2025 թվականի մայիսի 30-ին ստորագրված համաձայնագիրը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Տալ համաձայնություն՝ <<Դեպի Հայք>> հիմնադրամի կողմից Մարալիկի արվեստի դպրոցի շենքի մեկ միջանցքի և երեք դասասենյակների վերանորոգման ծրագրի

իրականացմանը:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջեի Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 06, դաս 01 (Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 4637 (Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածից 1 300 000 (մեկ միլյոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ հատկացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի <<Մարալիկի Արվեստի դպրոց>> բյուջետային հիմնարկին՝ <<Դեպի Հայք>> հիմնադրամի կողմից իրականացվող արվեստի դպրոցի մեկ միջանցքի և երեք դասասենյակների վերանորոգման ծրագրով նախատեսված աշխատանքների վարձատրության /820 000 ՀՀ դրամ/ և ծրագրում ընդգրկված կամավորներին սննդով ապահովելու համար /480 000 ՀՀ դրամ/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Օրակարգ-5

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ 2025 թվականի հունիսի 2-ի գրությամբ Անի համայնքի ղեկավարին դիմել է <<Լանջիկի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենը՝ դպրոցի մարզադահլիճի և հանդերձարանի դռների նորով փոխարինման համար դրամական աջակցություն տրամադրելու խնդրանքով:

Որոշման նախագծով նախատեսվում է ընդառաջել դպրոցի տնօրենի խնդրանքին և Անի համայնքի 2025 թվականի բյուջեի Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 02, դաս 02 (Միջնակարգ (լրիվ)տնդհանուր կրթություն) և տնտեսագիտական դասակարգման 4657 (Այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածից 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ հատկացնել <<Լանջիկի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ մարզադահլիճի և հանդերձարանի դռների նորով փոխարինման համար:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթով և հաշվի առնելով <<Լանջիկի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի խնդրանքը:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթով, հաշվի առնելով <<Լանջիկի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2025 թվականի հունիսի 2-ի գրությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Անի համայնքի 2025 թվականի բյուջեի Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 02, դաս 02 (Միջնակարգ (լրիվ)տնդհանուր կրթություն) և տնտեսագիտական դասակարգման 4657 (Այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածից 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ հատկացնել <<Լանջիկի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ մարզադահլիճի և հանդերձարանի դռների նորով փոխարինման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Օրակարգ-6

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքապետարանի Կրթության, մշակույթի,սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Գոհար Ծերունյան/

Զեկուցողը նշեց, որ <<Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակի <<Լրացուցիչ կրթության մանկավարժ>> հաստիքը նախատեսվում է փոխարինել <<Լոկոպեդի>> հաստիքով, իսկ <<Մարալիկի արվեստի դպրոց>> համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկի հաստիքացուցակում ավելացնել մեկ միավոր <<Կերպարվեցտի ուսուցչի>> հաստիք, որը նախատեսված է Բագրավան բնակավայում կերպարվեստի խմբակ բացելու և ուսուցում կազմակերպելու համար:

Տեղեկացվեց, որ կատավող փոփոխությունների արդյունքում համայնքի բյուջեի տարեկան ծախսերը կավելանան 1 մլն 248 հազար դրամով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային ենթակայությամբ բյուջետային հիմնարկների և համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունների 2025 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 162-Ա որոշման N 6 հավելվածում /<<Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ ևևտրային կազմակերպության/ կատարել հետևյալ փոփոխությունը.

ա) Որոշման հավելվածի 26-րդ տողի 2-րդ՝ «Հաստիքի անվանում»-ը սյունակում <<Լրացուցիչ կրթության մանկավարժ>> բառակապակցությունը փոխարինել <<Լոգոպեդ>> բառով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 17-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 162-Ա որոշման N 5 հավելվածում /<<Մարալիկի արվեստի դպրոց>> համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկ/ կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Որոշման հավելվածի 7-րդ տողի <<Կեպարվեստի ուսուցիչ>> 3-րդ՝ «Հաստիքի քանակ»-ը սյունակում նշված «3» թիվը՝ փոխարինել «4» թվով, նույն տողի 5-րդ՝ «Սահմանված դրույք»-ը սյունակում նշված «2.5» թիվը փոխարինել «3.5» թվով, նույն տողի 6-րդ՝ «Սահմանված դրույքաչափ»-ը սյունակում նշված «260 000» թիվը փոխարինել «364 000» թվով:

բ) վերջին՝ «Ընդամենը» տողի 3-րդ՝ «Հաստիքի քանակ»-ը սյունակում նշված «19» թիվը փոխարինել «20» թվով, նույն տողի 5-րդ՝ «Սահմանված դրույք»-ը սյունակի «17» թիվը փոխարինել «18» թվով, նույն տողի 6-րդ՝ «Սահմանված դրույքաչափ»-ը սյունակի «1913000» թիվը փոխարինել «2 017 000» թվով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Օրակարգ-7

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔՈՒՄ 30.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԵՆՅԱԿԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԺԱՄԿԵՏՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԵՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ Անի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Հերմինե Գրիգորյանը 2025 թվականի հուլիսի 1-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածում համայնքի 12-17 տարեկան աշակերտների համար անգլերեն խոսակցական լեզվի անվճար դասընթացներ կազմակերպելու համար Մարալիկի արվեստի դպրոցի շենքում մեկ աշխատասենյակ տրամադրելու խնդրանքով:

<u>Օրակարգ-7</u>

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔՈՒՄ 30.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԵՆՅԱԿԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԺԱՄԿԵՏՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԵՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ Անի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Հերմինե Գրիգորյանը 2025 թվականի հուլիսի 1-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածում համայնքի 12-17 տարեկան աշակերտների համար անգլերեն խոսակցական լեզվի անվճար դասընթացներ կազմակերպելու համար Մարալիկի արվեստի դպրոցի շենքում մեկ աշխատասենյակ տրամադրելու խնդրանքով:

Քաղաքացու նախաձեռնությունը խրախուսելի է և որոշման նախագծով նախատեսվում է տալ համաձայնություն՝ Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի արվեստի դպրոցի շենքի երկրորդ հարկի 30.0 քառակուսի մետր մակերեսով սենյակը 2025 թվականի հուլիսի 1-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածում անհատույց օգտագործման տրամադրել քաղաքացի Հերմինե Գրիգորյանին՝ համայնքի 12-17 տարեկան աշակերտների համար անգլերեն խոսակցական լեզվի անվճար դասընթացներ

կազմակերպելու համար:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով և է առնվել քաղաքացի Հերմինե Գրիգորյանի 2025 թվականի հունիսի 10 դիմումը:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔՈՒՄ 30.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԵՆՅԱԿԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԺԱՄԿԵՏՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԵՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով քաղաքացի Հերմինե Գրիգորյանի 2025 թվականի հունիսի 10 դիմումը՝ Անի համայնքի 12-17 տարեկան աշակերտների համար անգլերեն խոսակցական լեզվի անվճար դասընթացներ կազմակերպելու նախաձեռնության վերաբերյալ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի արվեստի դպրոցի շենքի /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց 2/ երկրորդ հարկի 30.0 քառակուսի մետր մակերեսով սենյակը 2025 թվականի հուլիսի 1-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածում անհատույց օգտագործման տրամադրել քաղաքացի Հերմինե Գրիգորյանին՝ համայնքի 12-17 տարեկան աշակերտների համար անգլերեն խոսակցական լեզվի անվճար դասընթացներ կազմակերպելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին.

Անհրաժեշտ պայմաններ ապահովել սույն որոշման 1-ին կետով նախատեսված դասընթացի պատշաճ կազմակերպման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Օրակարգ-8

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-013-0112-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 3.53453 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԾԻՐԱՆԱՏՈՒՖ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N 2608-Ա հրամանով <<ԾԻՐԱՆԱՏՈՒՖ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվել է 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N Լ-724 Լեռնհատկացման ակտ, Օգտակար հանածոյի արդյունահանման 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N ՇԱԹ-29/724 թույլտվություն և կնքվել է Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագիր, համաձայն որոնց <<ԾԻՐԱՆԱՏՈՒՖ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թույլատրված է 20 տարի ժամկետով Անիի տուֆերի հանքավայրի <<Քար-1>> տեղամասում բաց եղանակով տուֆ քարի արդյունահանման աշխատանքներ իրականացնել:

Հողատարածքը, որ տրամադրվել է ընկերությանը տուֆ քարի արդյունահանման աշխատանքներ իրականացնելու համար համաձայն Անիպեմզա բնակավարի կադաստրային քարտեզի հանդիսացել է գյուղ. նշանակության արոտ, որը օրենքով սահմանված կարգով փոխադրվել է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության, համայնքի ավագանու որոշմամբ հաստատվել է հողի նպատակային նշանակության փոփոխությունը և հողամասի նկատմամբ գրանցվել է համայնքի սեփականության իրավունքը: Տնտեսավորող սուբյեկտը դիմել է համայնքի ղեկավարի՝ այդ հողամասը վարձակալության տրամադրելու խնդրանքով:

Որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի վարչական տարաքում գտնվող /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Անիպեմզա, 2 հողամաս/, համայնքի սեփականությանը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-013-0112-0009 կադաստրային ծածկագրով 3.53453 հեկտար մակերեսով հողամասը (Վկայական N 26052025-08-0024) տուֆ քարի արդյունահանում կազմակերպելու նպատակով մինչև՝ 2045 թվականի հունիսի 25-ը, 176730 (մեկ հարյուր յոթանասունվեց հազար յոթ հարյուր երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարով վարձակալության տրամադրել <<ԾԻՐԱՆԱՏՈՒՖ>> սահմանափակ պատասխանատվությամբ

ընկերությանը օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերության հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 44-րդ կետի <<ը>> ենթակետի դրույթներով:

Զեկուցողը պատասխանեց ավագանու անդամ Գագիկ Հակոբյանի հարցերին:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-013-0112-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 3.53453 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԾԻՐԱՆԱՏՈՒՖ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 44-րդ կետի <<ը>> ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064 որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 25-ի N 2/փ-454 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N 2608-Ա հրամանով <<ԾԻՐԱՆԱՏՈՒՖ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N Լ-724 Լեռնհատկացման ակտը, Օգտակար հանածոյի արդյունահանման 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N ՇԱԹ-29/724 թույլտվությունը և Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N Պ-724 պայմանագիրը, համաձայն որոնց <<ԾԻՐԱՆԱՏՈՒՖ>> սահմանափակ պատասխանատվությամբ

ընկերությանը թույլատրված է 20 տարի ժամկետով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի տուֆերի հանքավայրի <<Քար-1>> տեղամասում բաց եղանակով տուֆ քարի արդյունահանման աշխատանքներ իրականացնել, հաշվի առնելով <<ԾԻՐԱՆԱՏՈՒՖ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործադիր տնօրենի 2024 թվականի մարտի 12-ի դմումը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի վարչական տարաքում գտնվող /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Անիպեմզա, 2 հողամաս/, համայնքի սեփականությանը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-013-0112-0009 կադաստրային ծածկագրով **3.53453** հեկտար մակերեսով հողամասը (Վկայական N 26052025-08-0024) տուֆ քարի արդյունահանում կազմակերպելու նպատակով մինչև՝ 2045 թվականի հունիսի 25-ը, **176730 (մեկ հարյուր յոթանասունվեց հազար յոթ հարյուր երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ** տարեկան վարձավճարով վարձակալության տրամադրել <<ԾԻՐԱՆԱՏՈՒՖ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետև՝ Ընկերություն, Պետական միասնական գրանցման համար՝ 48.110.1204351, ՀՎՀՀ 05553352, գործադիր տնօրեն՝ Վաղթանկ Մագբետի Գրիգորյան, անձնագիր՝ AU0561489, տրված՝ 27.12.20212, 022-կողմից, հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Անիպեմզա, 1-ին փողոց, շենք 22, բն 4, փ/ի 2903):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերության հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի վարձակալության պայմանագիր:

3. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Ընկերության միջոցներով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Օրակարգ-9

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 23-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անի համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 27-ի N 23-Ա որոշմամբ նախատեսվել էր հիմք ընդունելով Նոտարական վավերացում ստացած <<Գրանիտ>> կոոպերատիվի և քաղաքացի Սմբատ ՈՒլիխանի Հակոբյանի միջև կնքված 1997 թվականի հունիսի 4-ի առուծախի պայմանագիրը, գնման նախապատվության իրավունքով քաղաքացի Սմբատ ՈՒլիխանի Հակոբյանին վաճառել Կիսակառույց շինության պահպանման ու սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականություն հանդիսացող 08-003-0126- կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,48908 հեկտար մակերեսով 3-րդ կարգի ջրովի վարելահողը:

Սակայն Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 18/04/2025 թ. <<Գուքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը մերժելու մասին>> N Մ-18042025-08-0011 որոշմամբ հիմնավորված չի համարվել նոտարական վավերացում ստացած <<Գրանիտ>> կոոպերատիվի և քաղաքացի Սմբատ ՈՒլիխանի Հակոբյանի միջև կնքված 1997 թվականի հունիսի 4-ի առուծախի պայմանագիրը և կադաստրի կոմիտեի նշված որոշմամբ իրավունքների պետական գրանցումը մերժվել է:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջացել Անի համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 27-ի N 23-Ա որոշմը ճանաչել ուժը կորցրած և քաղաքացուն հետ վերադարձնել վճարված **695 717** (վեց հարյուր իննսունհինգ հազար յոթ հարյուր տասնյոթ)

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 18/04/2025 թ. <<Գուքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը մերժելու մասին>> N Մ-18042025-08-0011 որոշումը.

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց

ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 23-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետությ ենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հի դունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 18/04/2025 թ. <<Գու ատմամբ իրավունքների պետական գրանցումը մերժելու մասին>> N Մ-18042025-08-0 ոշումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է

1. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 27-ի <<Քաղաքացի Սմբատ ՈՒլիխանի Հակոբյանին վաճառված կիսակառույց շինության պահպանման ու սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականություն հանդիսացող 08-003-0126- կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,48908 հեկտար 3-րդ կարգի ջրովի վարելահողը, գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով, քաղաքացուն օտարելու մասին>> N 21-Ն որոշումը:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին

ա) Հետ վերադարձնել քաղաքացի Սմբատ ՈՒլիխանի Հակոբյանի կողմից վճարված համայնքի սեփականություն հանդիսացող 08-003-0126- կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,48908 հեկտար մակերեսով 3-րդ կարգի ջրովի վարելահողի կադաստրային արժեքը՝ գումարով 695717 (վեց հարյուր իննսունհինգ հազար յոթ հարյուր տասնյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ (քաղաքացի Սմբատ ՈՒլիխանի Հակոբյանի Լիազորված անձ՝ Գրիգոր Վոլոդյայի Եղոյան, Լիազորագիր՝ տրված 2024 թվականի սեպտեմբերի 4-ին, Նոտարական ակտի կոդ՝ 849-20240910-67-8321895 Գաղտնագիր՝ VYRA8U, Նույնականացման քարտ՝ 3010560028, տրված՝ 16.12.2019թ. 022-ի կողմից հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Ձերժինսկի փողոց շենք 12 բնակարան 12):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Օրակարգ-10

10) <<ՔԱՐԱԲԵՐԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԱՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ <<Քարաբերդի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենը իր 2025 թվականի հունիսի 9-ի դիմումով դիմել է Անի համայնքի ղեկավարին՝ Քարաբերդի միջնակարգ դպրոցի տարածքում Միացյալ Ազգերի կազմակերպության <<Համաշխարհային պարենային ծրագրով>> հիմնված ինտենսիվ մրգատու այգու պահպանության համար ցանկապատ կառուցելու կարիքների համար, որպես օգնություն, շինարարական նյութեր տրամադրելու խնդրանքով:

Համայնքապետարանը կարևորելով հիմնված ինտենսիվ մրգատու այգու պահպանությունը, որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի 2025 թվականի բյուջեի միջոցներով ձեռք բերված 84 կիլոգրամ 2 միլիմետր պատի հաստությամբ 48 միլիմետր արտաքին տրամաչափի մետաղական խողովակը և 3,3 մետր երկարության 1,5 միլիմետր տրամաչափի մետաղական լարը, որպես աջակցություն, տրամադրել <<Քարաբերդի միջնակարգ դպրոց>>

պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթով և հաշվի է առնելով <<Քարաբերդի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2025 թվականի հունիսի 9-ի դիմումը:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց

<<ՔԱՐԱԲԵՐԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԱՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթով, հաշվի առնելով <<Քարաբերդի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2025 թվականի հունիսի ..-ի դիմումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Անի համայնքի 2025 թվականի բյուջեի միջոցներով ձեռք բերված 84 կիլոգրամ 2 միլիմետր պատի հաստությամբ 48 միլիմետր արտաքին տրամաչափի մետաղական խողովակը և 3,3 կիլոգրամ 1,5 միլիմետր տրամաչափի մետաղական լարը, որպես աջակցություն, տրամադրել <<Քարաբերդի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը, դպրոցի տարածքում Միացյալ Ազգերի կազմակերպության <<Համաշխարհային պարենային ծրագրով>> հիմնված ինտենսիվ մրգատու այգու պահպանության համար ցանկապատ կառուցման կարիքների համար օգտագործելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Օրակարգ-11

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ Հ. ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ՇԻՆԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՉՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ

ԱՊԱՄՈՆՏԱԺՎԱԾ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Հարգելի գործընկերներ

Ինպես տեղյակ եք համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Անիի համայնքի Մարալիկ քաղաքում իրականացվում է Հ. Շահինյան փողոցի ասֆալտապատման շինարական աշխատանքների:

Շինարական աշխատանքների իրականացման ընթացքում, համաձայն ծրագրի նախագծ-նախահաշվային փաստաթղթերի, նախատեսված է ապամոնտաժել փողոցի կենտոնական հատվածով անցնող Մարալիկի բամբակամանվածքային ֆաբրիկայի կաթսայատնից Մարալիկ քաղաքի բազմաբնական բնակելի շենքերի ջեռուցման համար դեռևս 1982 թվականի անացկացված և ներկայումս չշահագործվող ջեռուցման համակարգի խողովակաշարերը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշմամբ սահմանված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի քաղաքային և գյուղական համայնքների սեփականության գույքի ցանկի>> Մարալիկ քաղաքի ներհամայնքային նշանակության ջերմամատակարարման համակարգը ընդգրկվել է համայնքին սեփականության իրավունքով փոխանցված գույքի ցանկում:

Որոշման նախագծով նախատեսվում է համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Անիի համայնքի Մարալիկ քաղաքում իրականացվող Հ. Շահինյան փողոցի ասֆալտապատման շինարական աշխատանքների արդյունքում չշահագործվող ջեռուցման համակարգից ապամոնտաժված 1050 գծամետր երկարության, 370 միլիմետր տրամաչափի 10 միլիմետր պատի հաստության մետաղական խողովակները ճանաչել համայնքի սեփականություն և այն ընդգրկել համայնքի սեփականության գույքի ցանկում:

Որոշման ընդքնումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, 77-րդ հոդվածի 3-րդ մասի, 78-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշմամբ սահմանված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի քաղաքային և գյուղական համայնքների սեփականության գույքի ցանկը>>:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդուվեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ Հ. ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ՇԻՆԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՉՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ԱՊԱՄՈՆՏԱԺՎԱԾ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, 77-րդ հոդվածի 3-րդ մասի, 78-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշմամբ սահմանված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի քաղաքային և գյուղական համայնքների սեփականության գույքի ցանկը>>, համաձայն որի Մարալիկ քաղաքի ներհամայնքային նշանակության ջերմամատակարարման համակարգը ընդգրկվել է համայնքի սեփականության գույքի ցանկում.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Անիի համայնքի Մարալիկ քաղաքում իրականացվող Հ. Շահինյան փողոցի ասֆալտապատման շինարարական աշխատանքների արդյունքում չշահագործվող ջեռուցման համակարգից ապամոնտաժված 1050 գծամետր երկարության, 370 միլիմետր տրամաչափի 10 միլիմետր պատի հաստության մետաղական խողովակները ճանաչել համայնքի սեփականություն և այն ընդգրկել համայնքի սեփականության գույքի ցանկում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Օրակարգ-12

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՇԵՆՔՈՒԻ ԵՐԿՈՒ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԵՐԵՔ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան է դիմել <<Գյումրու երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահ՝ Արթուր Նաջարյանը դիմել է Անիի համայնքապետարան՝ <<Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման>> ծրագրի շրջանակներում Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրում <<Երիտասարդական տարածք>> հիմնելու համար Սառնաղբյուր բնակավայրի մշակույթի տան շենքում երկու

աշխատասենյակ տրամադրելու խնդրանքով: Ծրագրով նպատակաուղղված է համայնքի 13-35 տարեկան երիտասարդների կարողությունների զարգացման, ռեսուրսների, ծառայությունների, տարբեր հնարավորությունների հասանելիությանը, որտեղ երիտասարդները կկարողանան գտնել ոգոշնչում՝ ստեղծագործելու, գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու, շփվելու, խաղալու և զվարճանալու հնարավորություններ:

Որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Սառնաղբյուր բնակավայրի մշակույթի տան շենքի /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Սառնաղբյուր բնակավայր, 1-ին փողոց 51 շենք / երկրորդ հարկի 35.0 քառակուսի մետր ներքին մակերեսով երկու աշխատասենյակները 2025 թվականի հուլիսի 1-ից 3 /երեք/ տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել <<Գյումրու երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն>> հասարակական կազմակերպությանը:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով և հաշվի է առնվել <<Գյումրու երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահ՝ Արթուր Նաջարյանի 2025 թգականի հունիսի 5-ի N Ե106-06/25 գրությունը:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՇԵՆՔՈՒԻ ԵՐԿՈՒ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԵՐԵՔ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով <<Գյումրու երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահ՝ Արթուր Նաջարյանի 2025 թգականի հունիսի 5-ի N Ե106-06/25 գրությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Սառնաղբյուր բնակավայրի մշակույթի տան շենքի /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Սառնաղբյուր բնակավայր, 1-ին փողոց 51 շենք / երկրորդ հարկի 35.0 քառակուսի մետր

ներքին մակերեսով երկու աշխատասենյակները 2025 թվականի հուլիսի 1-ից 3 /երեք/ տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել <<Գյումրու երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն>> հասարակական կազմակերպությանը /նախագահ Արթուր Նաջարյան/ <<Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման>> ծրագրի շրջանակներում Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրում <<Երիտասարդական տարածք>> հիմնելու համար, որը նպատակաուղղված է համայնքի 13-35 տարեկան երիտասարդների կարողությունների զարգացման, ռեսուրսների, ծառայությունների, տարբեր հնարավորությունների հասանելիությանը, որտեղ երիտասարդները կկարողանան գտնել ոգոշնչում՝ ստեղծագործելու, գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու, շփվելու, խաղալու և զվարճանալու հնարավորություններ:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին.

Անհրաժեշտ պայմաններ ապահովել սույն որոշման 1-ին կետով նախատեսված ծրագրի պատշաճ կազմակերպման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԲԱՐՅԱՆ

<<25>> հունիսի 2025 թ.
քաղաք Մարալիկ